61

Հաստատում եմ

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի

գիտության գծով պրոռեկտոր Պ. Ավետիսյան

«13» սեպտեմբերի 2021 թ.

ԿԱՐԾԻՔ

ԻԳ.00.02 - «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը հայցող Սիրանուշ Սերոժի Մելիքյանի «Եկեղեցի-պետություն փոխհարաբերությունները ՀՀ քաղաքական գործընթացներում. Հոգևոր անվտանգության հիմնախնդիրները» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Հաստատված է Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի Քաղաքագիտության ամբիոնի 2021 թ. սեպտեմբերի 10-ի նիստում: Նիստին մասնակցում էին փ. գ. թ., դոցենտ Հ. Լ. Սարգսյանը, փ.գ. դ., պրոֆեսոր Կ. Ա. Միրումյանը, պ.գ.դ., պրոֆեսոր Ա. Ս. Մանուկյանը, ք.գ.դ., պրոֆեսորի պ/կ Վ. Ս. Դավթյանը, ք.գ.թ Ա. Ռ. Հարությունյանը, ք.գ.թ., ավագ դասախոս Ն. Ա. Դունամալյանը:

Սիրանուշ Սերոժի Մելիքյանի «Եկեղեցի-պետություն փոխհարաբերությունները ՀՀ քաղաքական գործընթացներում. Հոգևոր անվտանգության հիմնախնդիրները» թեկնածուական ատենախոսությունն արդիական ուսումնասիրություն է: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, վերլուծված է դրա տեսական և գործնական նշանակությունը, հիմնական նպատակներն ու խնդիրները, թեմայի գիտական մշակվածության աստիճանը:

Փաստարկված և հիմնավորված են թեկնածուական ատենախոսության գիտական նորույթ հանդիսացող արդյունքները: Ատենախոսությունում ներկայացված են նաև աշխատանքի մեթոդաբանական հիմքերը, փաստարկված են ատենախոսության հիմնական դրույթները:

Հեղինակի պետաեկեղեցական հարաբերությունների ուսումնասիրությունը քաղաքական գիտության մեջ նոր մոտեցում է և հնարավորություն է տալիս թե՛ պետության, թե՛ հասարակության կյանքում վեր հանել երկու ինստիտուտների համագործակցությունն ու գործառույթների շրջանակը: Թեման արդիական և կիրառական է, քանի որ հետազոտողը բացի արդի խնդիրներն ընդգծելուց նաև ներկայացրել է լուծման ուղիների, մեթոդների գիտական հիմնավորումներ: Գիտահետազոտական առումով այս ուղղությամբ նոր գաղափարների առաջադրումը՝ մասնավորապես հոգևոր անվտանգության հայեցակարգի սահմանումը, պետաեկեղեցական հարաբերությունների մոդելային տիպաբանությունը, քաղաքացիական հասարակության և եկեղեցու ինստիտուտի կապի գիտական բացահայտումը, բանակ-եկեղեցի համագործակցության դիտարկումը ազգային անվտանգության ապահովման տեսանկյունից հրատապ է մեր երկրի համար, քանի որ հայաստանում ներկա փոխակերպումների, վերադասավորումների շրջանում երկու ինստիտուտների միջև առաջացած հիմնախնդիրների ուսումնասիրության անհրաժեշտությունը ևս վկայում է ատենախոսության թեմայի արդիականության մասին:

Ատենախոսությունը հնարավորություն է տալիս ուսումնասիրել քաղաքագիտական մտքի շրջանակներում որոշ մոտեցումներն ու հայեցակարգերն եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների մասին, ժամանակակից պայմաններում ներկայացնել եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների հայաստանյան մոդելի առանձնահատկությունները, անդրադառնալ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարական փաստաթղթերում հոգևոր անվտանգության արդի սպառնալիքներին:

Առաջնորդվելով այս նպատակներով՝ հեղինակն փորձում է առաջարկել ՀՌԻ հոգևոր առաջնորդության հայկական մոդելը, որը դիտարկվում է հոգևոր,

ազգային անվտանգության ապահովման համատեքստում, վեր հանելով բազմաթիվ խնդիրներ, ոլորտում առկա բացեր, առանձնահատկություններ: Առաջարկվում են նաև որոշ լուծումներ:

Հեղինակը վերլուծության է ենթարկել եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների հայաստանյան մոդելը՝ ուշադրություն դարձնելով պատմական փորձի որոշ դրվագների, արդի հարաբերությունների, իրավահարաբերությունների, պետության, հասարակության կյանքում եկեղեցու իրականացրած տարբեր գործառույթների, տարբեր ոլորտներում ունեցած դերի հիմնահարցերին: Ներկայացվել են քաղաքագիտական տարբեր դպրոցների ներկայացուցիչների աշխատությունների ուսումնասիրությունները (հիմնական ում, Լուսավորության շրջանի հեղինակների) քաղաքական գործընթացների էության վերաբերյալ:

Հեղինակը, հիմնականում, ուշադրություն է դարձնում հայ պետականության (Առաջին հանրապետությունից ի վեր) և եկեղեցու հարաբերությունների պատմության վրա: Աշխատանքում առանձին անդրադարձ է կատարվել նաև Արցախյան հակամարտության շուրջ Հայաստանի և Ադրբեջանի հոգևոր առաջնորդների հանդիպումներին, այդ հանդիպումների արդյունքներին, ակնկալիքներին և նպատակներին: Վերջում ուսումնասիրվել է Հայաստանում հոգևոր անվտանգության սպառնալիքները՝ առաջարկելով լուծման ուղիներ ու մեթոդներ:

Ատենախոսությունը բաղկացած է երեք գլխից: Առաջին գլխում ուսումնասիրության են ենթարկվել քաղաքական տեսաբանների մոտեցումները, մտքերը, հայեցակարգերը եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների շուրջ, եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների ձևաչափերի առանձնահատկությունները, վերջիններիս կիրառելիության միջազգային փորձը տարբեր երկրների օրինակներով: Ատենախոսության երկրորդ գլուխը նվիրված է եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների հայաստանյան մոդելի, Հայաստանի առաջին և երկրորդ հանրապետությունների շրջանում եկեղեցի-պետություն փոխազդեցության մոդելի, երկու ինստիտուտների

փոխհարաբերությունների իրավական կարգավորման վերլուծությանը: Ատենախոսության երրորդ գլխում անդրադարձ է կատարվել հոգևոր անվտանգության հայեցակարգի սահմանումներին, հոգևոր անվտանգության խնդրին պետությունների ազգային անվտանգության ռազմավարություններում, բանակ-եկեղեցի համագործակցությանը և հոգևոր անվտանգության այլ ոլորտներին:

Ամփոփելով նշենք, որ ատենախոսության հեղինակ Ս. Մելիքյանը համակողմանիորեն վերլուծության է ենթարկել հետազոտության գիտական նորույթով պայմանավորված խնդիրները: Ատենախոսության եզրակացություններում ամփոփված են հիմնական արդյունքները, ինչպես նաև կատարված են եզրահանգումներ, ընդհանրացումներ և առաջարկություններ:

Սեղմագիրը համապատասխանում է թեկնածուական ատենախոսության բովանդակությանը՝ լինելով դրա դրույթների համառոտ արտացոլումը:

Հեղինակի հրատարակած հոդվածներն ու աշխատություններն արտացոլում են թեկնածուական ատենախոսության հիմնական դրույթները, որոնք ունեն գիտագործնական նշանակություն:

Սիրանուշ Մելիքյանի ատենախոսությունն ունի մի շարք թերություններ, որոնցից հարկ ենք համարում նշել հետևյալները.

1. Ատենախոսության վեցերորդ էջում հեղինակը գրում է, որ «հետազոտության օբյեկտը պետաեկեղեցական հարաբերություններն են», իսկ «պետաեկեղեցական հարաբերությունների հայաստանյան իրողությունները» նա ներառում է հետազոտության առարկայի մեջ: Իրականում, ելնելով ատենախոսության անվանումից և շարադրված նյութից, համարում ենք, որ հենց այդ վերջինն է հետազոտության օբյեկտը: Ընդ որում, ատենախոսության սեղմագրում հետազոտության օբյեկտը և առարկան ձևակերպված չեն:
2. Հարցեր են ծագում հետազոտության տեսական ու մեթոդաբանական հիմքերի շուրջ.

ա) վիճելի է հեղինակի այն պնդումը, որ համակարգային և կառուցվածքային մեթոդները մասնավոր գիտական մեթոդներ են (էջ 7):

բ) հեղինակը փաստորեն շփոթում է ինդուկտիվ և դեդուկտիվ մեթոդները, պնդելով, որ «ինդուկտիվ մեթոդաբանությամբ տեսական մոտեցումներից... անցում է կատարվում դեպի ՀՀ ներկա հասարաքաղաքական գործընթացների... դաշտ» (էջ 8): Իրականում, անցումը տեսական ընդհանուր բնույթի դրույթներից կոնկրետ փաստերի՝ դա մտքի դեդուկտիվ ուղին է:

գ) «Դաշտային հետազոտությունը» առանձին մեթոդ չէ (էջ 8), այլ էմպիրիկ հետազոտության հատուկ ձև, որտեղ կիրառվում են փաստեր հավաքելու բազում կոնկրետ մեթոդներ:

3. Հեղինակը աշխատության առանձին հատվածներում (էջ 20, 106, 107, 111) անդրադառնում է եկեղեցի-պետություն կամ եկեղեցի-բանակ պատմական հարաբերություններին: Ցանկալի կլիներ, որ հետազոտությունը ներառեր Հայաստանում եկեղեցի-պետություն հարաբերությունների համալիր վերլուծությունը, հիմնվելով Մովսես Խորենացու, Ներսես Մեծի, Մխիթար Գոշի, Սմբատ Սպարապետի և այլ հայ մտածողների գաղափարների վրա:
4. Եկեղեցի-պետություն հարաբերության ներկա վիճակը համարժեք ընկալելու համար անհրաժեշտ է հաշվի առնել այն յուրահատուկ դերը, որ Հայ եկեղեցին կատարել է հայկական իրականությունում պետության բացակայության երկար ժամանակահատվածում: Հետևաբար, աշխատությունը կշահեր, եթե հեղինակը զոնե ակնարկային ձևով անդրադառնար այդ հարցին:
5. Աշխատության մեջ կարելի է նկատել, որ «հոգևոր անվտանգություն» հասկացությունը մեկնաբանվում է բավականին նեղ իմաստով, կապելով այդ խնդիրը ՀԱԵ հետ կամ էլ հիմնական շեշտը դնելով ռազմաքաղաքական ոլորտի վրա:
6. Սեղմագրում երրորդ գլխի երկրորդ ենթագլխի անվանումը ռուսերենով սխալ է թարգմանված:

7. Աշխատության մեջ առկա են ոչ կոռեկտ արտահայտություններ՝ «միջազգային քաղաքացիական հասարակություն», «նկարագրողական մեթոդ» (էջ 6), «հետազոտական հիմնական օրինաչափություն», «էմպիրիկ ձևով ներկայացնել ուսումնասիրությունը» (էջ 8): Կան նաև վրիպակներ, տեխնիկական բնույթի սխալներ:

Արված դիտողությունները չեն նսեմացնում հեղինակի կատարած աշխատանքը: Ելնելով վերոշարադրյալից, գտնում ենք, որ Սիրանուշ Սերոժի Մելիքյանի «Եկեղեցի-պետություն փոխհարաբերությունները ՀՀ քաղաքական գործընթացներում. Հոգևոր անվտանգության հիմնախնդիրները» թեմայով՝ ԻԳ.00.02-«Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ, քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին: Ատենախոսը, հաջող պաշտպանության պարագայում, արժանի է հայցվող գիտական աստիճանին:

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի
Քաղաքագիտության ամբիոնի վարիչ

փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ /Հ. Սարգսյան/

փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ Հ. Սարգսյանի ստորագրությունը հաստատում եմ

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի
Գիտական քարտուղար
Բանասիրական գիտությունների թեկնածու /Ռ. Կասաբաբովա/